ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2023 թվականի N 2319-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1777-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Ավիացիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի N 13 հավելվածը («Ավիացիոն պատահարների և միջադեպերի հետաքննություն»)՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգը հաստատելու մասին» N 1777-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ուժը կորցրած ճանաչել 5-րդ կետի երկրորդ պարբերությունը.

2) ուժը կորցրած ճանաչել 7-րդ կետի չորրորդ պարբերությունը.

3) 9-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական օդանավերի հետ տեղի ունեցած պատահարի կամ լուրջ միջադեպի դեպքում քննությունն անհապաղ կազմակերպում և վարում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից նշանակված հանձնաժողովը՝ կոնվենցիայի N 13 հավելվածին համապատասխան շահագրգիռ օտարերկրյա պետությունների և, անհրաժեշտության դեպքում, միջպետական ավիացիոն կոմիտեի (այսուհետ՝ ավիացիոն կոմիտե) մասնակցությամբ, միջկառավարական համաձայնագրին համապատասխան՝ ղեկավարվելով սույն կարգով:».

4) 10-րդ կետում «գլխավոր վարչությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե)» բառերով.

5) ուժը կորցրած ճանաչել 14-րդ կետը.

6) 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«31. Ղեկավար պաշտոնատար անձանց օպերատիվ ահազանգման, վթարափրկարարական ուժերի ու միջոցների փոխադրման, հանձնաժողովի ձևավորման և կազմավորման համար կոմիտեի կողմից կազմվում է պատահարի վերաբերյալ հաղորդագիր՝ կոնվենցիայի N 13 հավելվածին համապատասխան: Արտադրական կարգավարական ծառայությունների, օդային երթևեկության կարգավորման և կոմիտեի կենտրոնական կարգավարական ծառայության կարգավարները պատահարի կամ միջադեպի մասին տեղեկություն ստանալու դեպքում տեղի ունեցածի մասին առաջնային հաղորդումը փոխանցում են ավիացիոն պատահարի կամ միջադեպի դեպքում ահազանգման սխեմային համապատասխան (սխեման կցվում է):

Հաղորդումը փոխանցվում է նաև ավիացիայի կազմակերպության ղեկավարին, ում պատասխանատվության շրջանում տեղի է ունեցել պատահարը կամ լուրջ միջադեպը:

Պատահարի մասին առաջնային (սկզբնական) հաղորդումն ստանալուն պես կոմիտեն տեղի ունեցածի մասին անմիջապես տեղեկացնում է նախարարությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը,

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը:

Օտարերկրյա պետության օդանավի հետ տեղի ունեցած պատահարի մասին տեղեկությունը հաղորդվում է նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, գրանցման պետության դիվանագիտական ներկայացուցչություն և ավիաընկերության ներկայացուցչություն, որին պատկանում է պատահարի ենթարկված օդանավը:».

7) 32-րդ կետի առաջին պարբերությունում «գլխավոր վարչությանը» բառերը փոխարինել «նախարարությանը, կոմիտեին» բառերով.

8) 32-րդ կետի երրորդ պարբերությունում «գլխավոր վարչությունը» բառերը փոխարինել «կոմիտեն» բառով.

9) 33-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Քաղաքացիական ավիացիայի կազմակերպության ղեկավարը, պատահարի կամ լուրջ միջադեպի մասին սկզբնական հաղորդումն ստանալով, անմիջապես նախնական զեկույց է տալիս կոմիտեին, որն իր հերթին տեղեկացնում է նախարարությանը: Նախարարության լիազորությունների մեջ է մտնում ավիացիոն կոմիտեին, ինչպես նաև մարզպետին, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը իրազեկելը:».

10) 34-րդ, 35-րդ, 36-րդ, 59-րդ, 60-րդ, 61-րդ, 62-րդ, 92-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ, 99-րդ և 100-րդ կետերում «գլխավոր վարչություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «նախարարություն» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով.

11) 52-րդ կետում «գլխավոր վարչության պետը» բառերը փոխարինել «նախարարությունը» բառով.

12) ավիացիոն պատահարի կամ միջադեպի դեպքում ահազանգման սխեման շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ս Խ Ե Մ Ա

ԱՎԻԱՑԻՈՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԿԱՄ ՄԻՋԱԴԵՊԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՀԱՋԱՆԳՄԱՆ



»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 10-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.12.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ